



ք.Արմավյան, Հանրապետության 14/16
Հեռ. / тел. (094) 26-00-08; (091) 70-09-00

г. Абовян, ул. Анрапетутян 14/16
Էլ. փոստ՝ varmonrielti@mail.ru

«095-01/Վ-020»
17 Մարտի 2020թ.

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքային
համայնքի ղեկավար՝ պարոն Հ. Բալասյանին

Ի պատասխան Ձեր՝ թիվ Ե-253/20 առ. 09.03.2020թ.-ի գրության, Ձեզ է տրամադրվում՝
ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ
44 հասցեում գտնվող տարածքի օտարման մեկնարկային արժեքի որոշման /գնա-
հատման/ վերաբերյալ հաշվետվությունը:

Առդիր՝ թիվ «095-01/Վ-020» հաշվետվությունը՝
բաղկացած 08 թերթից, լուսանկարչական
հավելված՝ 03 թերթից:

Տնօրեն՝

Օ. Գևորգյան



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ	
ԲԵՐԻՆԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈ	
ՄՏԻՑ N	Գ - 541/20
« 19 »	03 2020

«Վ Ա Ր Մ Օ Ն Ռ Ի Ե Լ Թ Ի»

Բ. Աբովյան

17 Մարտի 2020թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն «095-01/Վ-020»

ԳՆԱՀԱՏՎՈՂ ՕՐՅԵԿՏԻ
ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ոչ բնակելի տարածք

ՀԱՍՅԵՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան
Վազգեն Սարգսյան փողոց 16 շենք թիվ
44 տարածք

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի
քաղաքապետարան

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ԱՍԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն.....	2
2. Գնահատման կատարման հիմքերը.....	3
3. Գնահատման ենթակա օբյեկտը, հասցեն.....	3
4. Գնահատման նպատակը.....	3
5. Գնահատման ժամանակահատվածը	3
6. Գնահատման գործընթացը.....	3
7. Գնահատվող օբյեկտի իրավական փաստաթղթերի փաթեթը	3
8. Գնահատվող օբյեկտի հետազոտություն, համառոտ նկարագրություն	3
9. Գնահատման մեթոդի ընտրությունը.....	5
10. Գնահատում համեմատական վերլուծության մեթոդով.....	6
11. Եզրակացություն.....	7
12. Օգտագործված ինֆորմացիոն աղբյուրներ և գրականության ցանկ.....	8
13. Սահմանափակումներ և հատուկ պայմաններ.....	8



Գնահատման կատարման հիմքերը

Գնահատումը կատարվել և սույն հաշվետվությունը կազմվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքի ղեկավար՝ պարոն Ն. Բալասյանի (հետագայում Պատվիրատու) պատվերով, «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼ-ԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հետագայում կատարող) կողմից:

Ծառայության մատուցման համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի թիվ՝ Ե-253/20 առ. 09.03.2020թ.-ի գրությունը /ստացվել է 11.03.2020թ./, որի հիման վրա կատարողն իրականացրել է գրության մեջ նշված՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքի օտարման մեկնարկային շուկայական արժեքի որոշումը:

Գնահատման ենթակա օբյեկտը

Գնահատման ենթակա օբյեկտ է հանդիսանում՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը:

Գնահատման նպատակը

Գնահատման կատարման նպատակն է պարզել՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքի օտարման մեկնարկային շուկայական արժեքը:

Գնահատման ժամանակահատվածը

Գնահատման աշխատանքները կատարվել են՝ 2020 թվականի մարտի 11-ից 17-ն ընկած ժամանակահատվածում:

Գնահատվող օբյեկտի իրավական փաստաթղթերի փաթեթը

Գրության հետ ստացվել է՝ սեփականության իրավունքի գրանցման թիվ 2730770 վկայականի պատճենը, ըստ որի ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ 44 տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքային համայնքին:

Նետազոտություն

Ընդհանուր տեղեկություններ

Տեղագրման ամսաթիվը՝ 11.03.2020թ.:

Գնահատման ամսաթիվը՝ 17.03.2020թ.:

Գնահատման նպատակը – շուկայական արժեքի որոշում:

Գնահատման գործառույթը – շուկայական արժեքի որոշում:

Անշարժ գույքի շուկայական արժեքը բաց և մրցակցային շուկայում, սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վաճառողի և Գնորդի գիտակցաբար, արդարացի առևտրի բոլոր պայմանների պահպանմամբ և օրինական գործողությունների արդյունքում ձևավորվող, անշարժ գույքի վաճառքի առավել հավանական գինն է, որը անշարժ գույքի գնահատման օբյեկտների համար կարող է որոշվել գնահատողի կողմից անշարժ գույքի գնահատմամբ: Անշարժ գույքի շուկայական արժեքը հաշվարկային մեծություն է գնահատման ամսաթվի դրությամբ և ունի խորհրդանշական բնույթ:



Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը

Անվանումը	Տարածք
Հասցե	ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան, Վազգեն Սարգսյան փողոց, 16 շենք, թիվ 44 տարածքը
Ընդհանուր մակերեսը	83,4քմ
Հարկ/հարկայնություն	5/1
Շենքի տիպը	քարե
Շենքի միջհարկային ծածկերը	ե/ք
Առաստաղի բարձրությունը	2.7 մ.
Մուտքի դուռը	երկփեղկ, մետաղյա շերտաթիթեղներից, հին,
Դռները	սեղմաստվարաթղթի և փայտի համադրմամբ, ունեն հնամաշ տեսք
Պահեստային մաս	հատակը՝ բետոնապատ, որոշ հատվածներում քանդված և վնասված տեղամասեր, պատերի և առաստաղի կոամետիկ վերանորոգումը իսպառ բացակայում է: Պահեստային հատվածը լցված է տնտեսական և շինարարական աղբով:
Սպասարկման սրահ	հատակը բետոնապատ է, որոնց վրա առկա են վնասված և տարանջատված տեղամասեր. պատերի և առաստաղի կոամետիկ վերանորոգումը իսպառ վերացված է, առկա են մեխանիկական վնասվածքներ, ճաքեր, մասայական գաջածածկի շերտազատման հատվածներ և ջրային ներգործությունից քայքայված տեղամասեր:
Պատուհանները	փայտյա, հնամաշ վիճակում, տեղադրված են երկայթյա ճաղավանդակներով, որոնց վրա առկա են կոռոզիոն գոյացություններ
Կոմունալ հարմարությունները	գազաֆիկացված չէ, չունի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ, սան. հանգույց, կոմունալ հարմարություններ, վնասված են հոսանքի մատակարարման հաղորդալարերը, լուսային սարքերը և սպառիչները՝ վարդակներն ու խրոցները:
Ընդհանուր վիճակը	վատ
Այլ պայմաններ	Գնահատվող տարածքը ունի հիմնանորոգման և կոմունիկացիոն աշխատանքների կարիք:

Ստորև ներկայացված է Բյուրեղավան քաղաքի քարտեզից հատված, որտեղ գտնվում է գնահատվող օբյեկտը.



Գնահատման գործընթացը

- Գնահատման գործընթացը իր մեջ ներառում է հետևյալ գործողությունները.
- օբյեկտի գտնվելու վայրի ուսումնասիրություն և վերլուծություն
 - օբյեկտի տեղագնում, լուսանկարում, տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրում



- հարցազրույց սեփականատերերի հետ
- համապատասխան ինֆորմացիայի, տվյալների հավաքագրում, համեմատվող տարբերակների տեղազննում, ինֆորմացիայի մշակում և տվյալ գոտում անշարժ գույքի շուկայում իրադրության վերլուծություն
- անշարժ գույքի գնահատման կիրառելի մեթոդների ընտրություն և համապատասխան հաշվարկների կատարում
- գնահատման ամբողջական հաշվետվության կազմում՝ վերջնական արժեքի եզրակացությամբ:

Լափագույն և առավել արդյունավետ օգտագործման տարբերակ

Անշարժ գույքի առավել հավանական և առավել նպատակաուղղված օգտագործումը, որը ֆիզիկապես հնարավոր է, իրավաբանորեն թույլատրելի, ֆինանսապես իրագործելի, ապահովում է անշարժ գույքի առավելագույն արժեքը:

Շուկայական արժեքի որոշման համար հիմք է հանդիսանում անշարժ գույքի լափագույն-և առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունը (դիտարկումը):

Վերլուծության արդյունքում կարող են ի հայտ գալ օգտագործման մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք այնուհետև պետք է դիտարկվեն ֆինանսական նպատակահարմարության տեսանկյունից: Օգտագործման այն տարբերակը, որը կապահովի անշարժ գույքի առավել բարձր արժեքը, համարվում է առավել արդյունավետ տարբերակ: Լափագույն և առավել արդյունավետ տարբերակի ընտրությունը գնահատողի մասնագիտական կարծիքն է անշարժ գույքի օգտագործման վերաբերյալ:

Առավել արդյունավետ օգտագործման հասկացությունը հանդիսանում է հիմնարար, ինչպես նաև՝ շուկայական արժեքի հաշվարկման անբաժան մասը:

Համաձայն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, անշարժ գույքի գնահատման հաշվետվության պահանջ է հանդիսանում անշարժ գույքի լափագույն և առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունը, եթե պատվիրատուն նման վերլուծության ցանկություն հայտնել է:

Գնահատման պատվերի համաձայն պատվիրատուն նման վերլուծության ցանկություն չի հայտնել:

Անշարժ գույքի գնահատման մեթոդների նկարագրությունը և ընտրությունը

Անշարժ գույքի շուկայական գնահատման պրակտիկայում կիրառվում են 3 հիմնական մեթոդներ՝ համեմատական, եկամտային և ծախսային:

Համեմատական մեթոդ

Համեմատական մեթոդն իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է՝ այն համեմատելով համանման և համադրելի անշարժ գույքի օբյեկտների հետ:

Գնահատման համեմատական մեթոդի հիմքում ընկած է փոխարինման սկզբունքը:

Փոխարինման սկզբունքը համեմատական մեթոդում պայմանավորված է այն ենթադրությամբ, որ գնորդը (վարձակալը) տվյալ անշարժ գույքի համար չի վճարի ավելին, քան կկազմի այն գումարը, որը անհրաժեշտ է նմանատիպ տվյալներով և օգտագարությամբ անշարժ գույքի ձեռքբերման (վարձակալման) համար:

Եկամտային մեթոդ

Եկամտային մեթոդն իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է՝ հիմնվելով նրա եկամտաբերելու կարողության վրա:

Գնահատման եկամտային մեթոդի հիմքում ընկած են փոխարինման և սպասումների սկզբունքները: Գնահատման եկամտային մեթոդը ներառում է երկու հիմնական եղանակ՝ եկամտի կապիտալիզացիա և դիսկոնտավորում:

Քանի որ չունենք վարձակալության տրված նմանատիպ գույքերի վերաբերյալ բավականաչափ և հավաստի տվյալներ, ուստի չենք կարող կիրառել եկամտային մեթոդը:

Ծախսային մեթոդ

Ծախսային մեթոդն իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքն որոշվում է որպես առանց բարելավումների հողամասի արժեքի և տվյալ հողամասի վրա առկա կառույցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հանրագումար՝ նվազեցված կուտակված մաշվածության չափով:

Գնահատման ծախսային մեթոդի հիմքում ընկած է փոխարինման սկզբունքը: Քանի որ մենք չգիտենք բնակարանի մասնաբաժինը շենքի ամբողջ հողամասի և քաղաքի օգտագործման տարածքների մակերեսի մեջ, ուստի չենք կարող կիրառել ծախսային մեթոդը:



Շուկայական արժեքի հաշվարկ համեմատական մեթոդով

Տվյալ անշարժ գույքի գնահատման համար կատարված ուսումնասիրության արդյունքում հավաքագրվել են տեղեկություններ նմանօրինակ երեք գույքերի վաճառքների վերաբերյալ, որոնք կարող են հանդիսանալ համադրման «անալոգ»:

Աղյուսակում բերված են տարածագնահատման միևնույն գոտում վերջին ամիսների ընթացքում գնահատվող գույքին համանման տարածքների փաստացի վաճառքների, առաջարկների օրինակներ:

Համեմատվող օբյեկտների ընտրության համար ուսումնասիրվել են www.myrealty.am, www.bnakaran.com, www.igind.am, www.list.am, www.realakcern.am/, www.erkirrealty.am, կայքերը և Գինդ շաբաթաթերթը:

Հավաքագրված տեղեկությունները խմբավորվել և զետեղվել են ստորև բերված աղյուսակում.

Տարածքի գնահատման համեմատական մեթոդ

Համեմատության Միավոր	Գնահատվող օբյեկտ	Համեմատ օբյեկտ N 1	Համեմատ օբյեկտ N 2	Համեմատօբյեկտ N 3
Գույքի անվանումը	տարածք	շինություն	տարածք	տարածք
Տեղադրությունը	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, վ. Սարգսյան 16/44	ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան,	ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան,	ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան,
Վաճառքի, առաջարկի գինը		10.965.000	6.545.800	9.735.700
Մակերես	83,4քմ	86քմ	46քմ	73,4քմ
1քմ գինը		127.500	142.300	132.640
Տվյալների աղբյուր		https://www.list.am	https://www.list.am	https://www.list.am
Ամիսը/տարեկան		02.2020	03.2020	02.2020
Շինության Տեսակը	քարե	քարե	քարե	քարե
Ուղղում/%/		0	0	0
Ուղղված 1քմ գինը		127.500	142.300	132.640
Հարկ/Հարկայնություն	5/1	2/1հարկ	5/կիսանկող	5/1
Ուղղում/%/		0	4	0
Ուղղված 1քմ գինը		127.500	147.992	132.640
Տեղադրություն/դիրք	բավ	բավ	լավ	բավ
Ուղղում/%/		0	-5	0
Ուղղված 1քմ գինը		127.500	140.592	132.640
Ներքին Հարդարանք	անբավարար	բավ	միջին	միջին
Ուղղում/%/		-10	-15	-15
Ուղղված 1քմ գինը		114.750	119.503	112.744
Կոմունալ հարմարությ.	անբավարար	բավ	միջին	բավ
Ուղղում/%/		-10	-15	-10
Ուղղված 1քմ գինը		103.275	101.577	101.469
Մրցեարկ . Բարձրություն	2,7մ.	2,8մ.	3մ.	3,1մ.
Ուղղում/%/		-1	-2	-3
Ուղղված 1քմ գինը		102.242	99.545	98.424
Մրցեարկային Ծածկ	ե/բ	ե/բ	ե/բ	ե/բ
Ուղղում/%/		0	0	0
Ուղղված 1քմ գինը		102.242	99.545	98.424
Համեմատվող գույքի 1քմ-ի արժեքը		100.000 ՀՀ դրամ		
Համեմատվող գույքի արժեքը		100.000 ՀՀ դրամ		



Շնորհամաների ստացված չափերը նմանատիպ տարածքների համար գտնվում են թույլատրելիության սահմաններում և հնարավորություն են տալիս բացվածքների 1քմ հաշվարկված արժեքները միջինացնելով, ստանալ բազային ցուցանիշ:

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի հետազոտվող տարածաշրջանում, նմանատիպ շինությունների 1քմ ընդհանուր մակերեսի միջին շուկայական արժեքի ելակետային ցուցանիշը կազմում է՝ 100.000 ՀՀ դրամ:

Սույն հաշվետվության շրջանակներում կատարվում է ներկայացված գույքի օտարման մեկնարկային արժեքի որոշում, ուստի անհրաժեշտ է կիրառել նաև շուկայական և օտարման մեկնարկային արժեքների հարաբերությունը հաշվի առնող գործակից, ինչը որոշվել է ելնելով անշարժ գույքի շուկայում կատարված ուսումնասիրություններից, մասնավորապես պետական սեփականություն հանդիսացող գույքի վաճառքի գնի և մասնավոր սեփականություն հանդիսացող նույնատիպ գույքի վաճառքի գնի հարաբերությունից և ընդունվում է 0,5 գործակիցը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացվածքն ունի հիմնանորոգման կարիք, ինչը հանգեցնում է ժամանակի և դրա հետ կապված եկամտի (վարձակալության հանձնումից ակնկալվող) կորստի, անմխիթար ապրանքային վիճակում է, ուստի վերոգրյալ արժեքի նկատմամբ կիրառվում են նշված հանգամանքները հաշվի առնող համապատասխանաբար 0,5 և 0,5 գործակիցներ:

Այսպիսով, գնահատման ենթակա՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ 44 տարածքի օտարման մեկնարկային շուկայական արժեքը գնահատվում է՝
 $83,4քմ \times 100.000 \times 0,5 \times 0,5 \times 0,5 = 1.042.500$ կամ կլորացված 1.043.0000 /մեկ միլիոն քառասուներեք հազար / ՀՀ դրամ:

Եզրակացություն

Կատարված հետազոտության, ուսումնասիրությունների արդյունքների և հաշվարկների համադրումից գնահատողը հանգում է հետևյալ եզրակացության.

Գնահատման տրամադրած՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 16 շենքի թիվ 44 տարածքի օտարման մեկնարկային արժեքը հետազոտության կատարման ժամանակահատվածի դրությամբ, առկա ապրանքային վիճակում, գնահատվում է՝

1.043.0000 /մեկ միլիոն քառասուներեք հազար / ՀՀ դրամ:



Օգտագործված ինֆորմացիոն աղբյուրներ և գրականության գանկ

1. ՀՀ օրենսդրություն «ԱԳ գնահատման գործունեության մասին օրենք» ՀՕ-189-Ն:
2. ՀԱՏ 252 -2012թ. ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտ:
3. ԱԳ առուվաճառքների և վարձակալությունների հետ կապված ամսագրեր, թերթեր:
4. Ռեկլամային գրասենյակների կողմից տրամադրված տեղեկատվություն
5. «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի ինֆորմացիոն բազա:

Սահմանափակումներ և հատուկ պայմաններ.

Սույն հաշվետվությունը վավեր է միայն ամբողջությամբ: Առանձին մասերը, ինչպես նաև հավելվածները չեն կարող մեկնաբանվել առանձին, այլ միայն ներկայացված ամբողջականությամբ և միայն նշված նպատակներով:

Մասնագետը գործել է որպես անկախ կատարող:

Մասնագետի կողմից կատարված հետազոտությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:

Մասնագետը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալների հավաստիության համար:

Մասնագետը պարտավորվում է պահպանել հետազոտության ընթացքում պատվիրատուի կողմից ստացված կամ հաշվարկների միջոցով պարզաբանված ինֆորմացիայի գաղտնիությունը:

Մասնագետի կատարած աշխատանքների վարձատրությունը կապված չէ վերջնական արդյունքի և եզրակացության հետ:

Գույքի մասնատման կամ լրացուցիչ պարամետրների ավելացման հետևանքով հնարավոր է գույքի արժևի փոփոխություն, որի համար մասնագետը չի կարող պատասխանատվություն կրել :

Գնահատողի կարծիքը, գույքի արժևի վերաբերյալ, ուժի մեջ է՝ գնահատման ժամանակահատվածի դրությամբ և գնահատողը պատասխանատվություն չի կրում գույքի արժևի հետագա կտրուկ փոփոխությունների համար, որոնք կարող են ի հայտ գալ այդ ժամանակահատվածից հետո՝ սոցիալական և տնտեսական գործոնների, կամ քաղաքացիական օրենսդրության փոփոխությունների հետևանքով:

Գնահատող
ՎԿ. N Ա.Գ.Գ. 239



Աննա Մարտիրոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ**

ՎԿԱՅԱԿԱՆ N ԱԳԳ 239

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎՈՒՄ Է

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ



առ այն, որ մա մասնակցել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված անշարժ գույքի գնահատման գործունեության մասնագիտական որակավորման ստուգմանը: Համաձայն ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ «24» հուլիսի 2018թ. թիվ 168-Ա հրամանի ստացել է

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
անշարժ գույքի կադաստրի
կոմիտեի ղեկավարի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Ա.Մուսայան



24 հուլիսի 2018թ.

Հ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ



Հ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ը 1



Հ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ը 2



Հ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ը 3



54 4th Regiment



55 4th Regiment



56 4th Regiment




Infantry 57



Infantry 58





1000 510



1000 511







James E. Gump 513



James E. Gump 514



James E. Gump 515





10000000 816



10000000 817

